

ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ ՓԲԸ

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՍԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Հաստատված է ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ ՓԲԸ
Գլխավոր գործադիր տնօրենի կողմից 2011թ. հունվարի 25-ին
Սույն կանոնը ուժի մեջ կմտնի 2011 թ. փետրվարի 6-ից

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3

2. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ 3

3. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 3

4. ՀԱՃԱԽՈՐԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻՑ ՊԱՀԱՆՁՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ..... 4

5. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ..... 5

6. ԲԱՆԿԻՆ ՏՐՎՈՂ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԻ ՁԵՎԸ ԵՎ ԴՐԱ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ . 6

7. ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ..... 7

8. ՀԱՃԱԽՈՐԴԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ..... 8

9. ՍԱԿԱԳՆԵՐ 8

10. ՀԱՐԿՈՒՄ 8

11. ՏԵՂԵԿԱՑՈՒՄՆԵՐ ՀՆԱՐԱՎՈՐ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ..... 8

12. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ 9

13. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄ 9

14. ԲՈՂՈՔՆԵՐ 10

15. ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ..... 10

16. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ..... 10

ՀԱՎԵԼՎԱԾ 1..... 12

ՀԱՎԵԼՎԱԾ 2..... 13

ՀԱՎԵԼՎԱԾ 3..... 14

ՀԱՎԵԼՎԱԾ 4..... 15

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն կանոնները կարգավորում են «ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԲԸ-ի (այսուհետև՝ Բանկ) կողմից արժեթղթերի շուկայում ֆիզիկական և/կամ իրավաբանական անձանց (այսուհետև՝ Հաճախորդ) բրոքերային ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները:

Սույն կանոնները հանդիսանում են Բանկի և Հաճախորդի միջև կնքվող Բրոքերային ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագրի անբաժանելի մասը, որի դրույթները գերակա են սույն կանոններով սահմանված դրույթների նկատմամբ:

Սույն կանոններին համապատասխան՝ Բանկը բրոքերային ծառայություններ է մատուցում ՀՀ տարածքում և դրա սահմաններից դուրս ազատ շրջանառության իրավունքով շրջանառվող արժեթղթերի համար:

Սույն կանոնները մշակված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից սահմանված կանոնակարգերի, արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեությունը կանոնակարգող այլ իրավական ակտերի, Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայի և Հայաստանի Ֆոնդային Բորսայի կանոններին համապատասխան:

2. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ

Լրիվ անվանումը՝ «ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ» փակ բաժնետիրական ընկերություն

Գտվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Տերյան 66

Հեռ՝ (374-10) 515 000, Ֆաքս՝ (374 10) 51 50 01, Էլ. փոստ՝ hsbc.armenia@hsbc.com

Պետական գրանցումը՝ 20 հունիսի 1995թ., գրանցման համարը՝ 67

Լիցենզիա՝ Բանկային գործունեության լիցենզիա թիվ 67

Լիցենզիան տրամադրվել է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից

Հասցե՝ ՀՀ ք.Երևան - 0010, Վազգեն Սարգսյան 6,

Հեռ՝ (374-10) 583 841, Ֆաքս՝ (374-10) 523 852, Էլ. փոստ՝ mcba@cba.am

«ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԲԸ-ն քանկային գործունեության հետ համատեղ իրականացնում է բրոքերային և արժեթղթերի շուկայում այլ ներդրումային ծառայությունների մատուցման գործառնություններ:

3. ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն Կանոններում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

- 3.1 «**Բրոքերային ծառայություններ**». Բանկի անունից և Հաճախորդի հաշվին կամ Հաճախորդի անունից և Հաճախորդի հաշվին արժեթղթերի առքի և վաճառքի գործարքների կատարում՝ Հաճախորդի կողմից Բանկին ներկայացվող հանձնարարականների հիման վրա
- 3.2 «**Արժեթուղթ**». ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, ինչպես նաև այլ օրենքներով սահմանված արժեթղթերը (անկախ դրանց ձևից՝ թղթային կամ ոչ թղթային) :
- 3.3 «**Հաճախորդ**». ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որի հետ Բանկը ունի բրոքերային ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագիր
- 3.4 «**Պատասխանատու աշխատակից**». անձ, որը Բանկի կազմում և նրա անունից իրականացնում է բրոքերային գործունեություն (արժեթղթերի առքի և վաճառքի գործունեություն), ընդունում, փոխանցում և կատարում է Հաճախորդների հանձնարարականները:
- 3.5 «**Մպասարկող**». անձ, որը Բանկի կազմում իրականացնում է Հաճախորդի արժեթղթերի հաշվառումը և սույն կանոններով նախատեսված հաշվետվությունների պատրաստումն ու ներկայացումը:
- 3.6 «**Պայմանագիր**». Բրոքերային ծառայություններից օգտվելու համար Բանկին դիմած անձի և Բանկի միջև կնքված փաստաթուղթ, որով սահմանվում են տվյալ անձի արժեթղթերով և/կամ դրամական միջոցներով գործարքների կնքման, կատարման, ծառայությունների դիմաց վճարման, հաշվետվությունների ներկայացման կարգը և դրանց հետ կապված կողմերի իրավահարաբերությունները:
- 3.7 «**Հանձնարարական**». Հաճախորդի կողմից Բանկին տրվող և Հաճախորդի արժեթղթերով և/կամ դրամական միջոցներով Բանկի կողմից գործարքի կնքման համար հիմք հանդիսացող փաստաթուղթ:
- 3.8 «**Պատվեր**». Հանձնարարականում նշվող տեղեկությունների համախումբ, որը ներառում է Հանձնարարականի հիման վրա գործարքի կնքման համար անհրաժեշտ գնի, ծավալի և ժամկետների վերաբերյալ տեղեկատվությունը:

- 3.9 «**Հերթ**». Բոլոր Հաճախորդների կողմից տրված, բայց դեռևս չկատարված Հանձնարարականների հաջորդականություն, որոնք ենթակա են կատարման ըստ դրանց ստացման հերթականության՝ ելնելով պատվերի տեսակից և շուկայի իրավիճակից:
- 3.10 «**Շուկայական պատվեր**». Հաճախորդի կողմից Բանկին տրվող Հանձնարարականում նշված պատվեր, որը նախատեսում է Հանձնարարականի կատարում՝ տվյալ պահին շուկայում գոյություն ունեցող գնով անմիջապես արժեթուղթ գնելու կամ վաճառելու պայմանով:
- 3.11 «**Գնման/վաճառքի լիմիտային պատվեր**». Հաճախորդի կողմից Բանկին տրվող հանձնարարականում նշված պատվեր, որը նախատեսում է Հանձնարարականի կատարում՝ Հանձնարարականում ֆիքսված գնից ոչ բարձր (ոչ ցածր) գնով արժեթուղթ գնելու (վաճառելու) պայմանով:
- 3.12 «**Գնման/վաճառքի ստույ պատվեր** ». Հաճախորդի կողմից Բանկին տրվող Հանձնարարականում նշված պատվեր, որը նախատեսում է Հանձնարարականի կատարում՝ Հանձնարարականում նշված գնին բորսայում կամ բորսայից դուրս տվյալ արժեթղթի գինը հասնելու դեպքում:
- 3.13 «**Գնման/վաճառքի ստույ լիմիտային պատվեր**». Հաճախորդի կողմից Բանկին տրվող Հանձնարարականում նշված պատվեր, որը միաժամանակ ներառում է գնման (վաճառքի) լիմիտային պատվերը մի գնով և գնման (վաճառքի) ստույ պատվերը մեկ այլ գնով:
- 3.14 «**Քավարարել ամբողջությամբ**» պատվեր. Հաճախորդի կողմից Բանկին տրվող Հանձնարարականում նշված պատվեր, որը նախատեսում է Հանձնարարականի կատարում բացառապես Հանձնարարականում նշված քանակով արժեթղթերի գնման կամ վաճառքի պայմանով:
- 3.15 «**Քավարարել մասնակի**» պատվեր. Հաճախորդի կողմից Բանկին տրվող Հանձնարարականում նշված պատվեր, որը նախատեսում է Հանձնարարականի կատարումը մասնակիորեն՝ մնացորդը Հանձնարարականների հերթում ընդգրկելու պայմանով:
- 3.16 «**Հանել մնացորդը**» պատվեր. Հաճախորդի կողմից Բանկին տրվող հանձնարարականում նշված պատվեր, որը նախատեսում է Հանձնարարականի անմիջապես կատարում Հանձնարարականում նշված արժեթղթերի քանակի հնարավոր առավելագույն չափով՝ մնացորդը հանձնարարականների հերթում չընդգրկելու պայմանով:
- 3.17 «**Անմիջապես բավարարել կամ հանել**» պատվեր. Հաճախորդի կողմից Բանկին տրվող Հանձնարարականում նշված պատվեր, որը նախատեսում է Հանձնարարականի անմիջապես կատարում Հանձնարարականում նշված գնով և քանակով, հակառակ դեպքում Հանձնարարականը չընդգրկելով Հանձնարարականների հերթում:
- 3.18 «**Պահել հերթում մինչև բավարարումը**» պատվեր. Հաճախորդի կողմից Բանկին տրվող Հանձնարարականում նշված պատվեր, որը նախատեսում է, որ Հանձնարարականը կարող է մնալ հերթում՝ մինչև Հանձնարարականում նշված լրիվ քանակով արժեթղթերի գնումը կամ վաճառքը:
- 3.19 «**Բորսայական գործարք**». ֆոնդային բորսայի կանոններով սահմանված կարգով ֆոնդային բորսայում կնքված գործարք:
- 3.20 «**Արտաբորսայական գործարք**». ֆոնդային բորսայից դուրս կատարված գործարք:
- 3.21 «**Արժեթղթերի առաջարկ**» է համարվում Հաճախորդներին ուղղված ցանկացած ձևի հաղորդակցությունը, որն արժեթուղթը վաճառելու կամ գնելու առաջարկ անելու հրավեր է պարունակում:
- 3.21 «**Թողարկող**». այն անձը, որն արժեթուղթ է թողարկում (թողարկել) կամ իր անունից արժեթուղթ թողարկելու առաջարկություն է անում:
- 3.22 «**Տեղա բ աշխող**». այն անձը, որը տեղաբաշխման նպատակով թողարկողից արժեթղթեր է ձեռք բերում և (կամ) տեղաբաշխման նպատակով թողարկողի արժեթղթերն է առաջարկում, վաճառում կամ մասնակցում է մման գործ իրականացնելու համաձայնությանը կամ պայմանագրին այն բացառություններով, որոնք կարող են սահմանվել Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով:
- 3.23 «**Կարճ վաճառք**». հաճախորդի կողմից տրված արժեթղթի/երի վաճառքի այն պատվերը, երբ պատվերի ներկայացման և/կամ կատարման ժամանակ հաճախորդը Բանկում արժեթղթերի իր հաշվին չի տիրապետում այդ արժեթղթերը կամ հաշվի բացակայության դեպքում համապատասխան արժեթղթերը չի փոխանցել Բանկի ՀՀ կենտրոնական բանկում կամ դեպոզիտարիայում վարվող արժեթղթերի հաշվին:

Սույն Կանոններում օգտագործվող այլ հասկացություններն ունեն այն իմաստը, որը սահմանվում է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կենտրոնական Բանկի կողմից սահմանված կանոնակարգերի, արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեությունը կանոնակարգող այլ իրավական ակտերի, Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայի կանոնակարգի դրույթներին համապատասխան:

4. ՀԱՃԱԽՈՐԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻՑ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ

- 4.1 Բրոքերային ծառայություններից օգտվելու ցանկություն ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձինք Բանկում կարող են բացել բանկային հաշիվներ՝ ներկայացնելով Բանկի ներքին ընթացակարգերով սահմանված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

- 4.2 Հաճախորդը Բանկում հաշիվ բացելու առաջարկից հրաժարվելու պարագայում Պատասխանատու աշխատակցին պետք է ներկայացնի Բանկի Հաշիվների Բացման ներքին ընթացակարգով սահմանված բոլոր անհրաժեշտ տեղեկությունները:
- 4.3 Հաճախորդը պարտավոր է անմիջապես Բանկին ներկայացնել սույն կանոնների 4.1 և 4.2 կետերով նախատեսված և Բանկին ներկայացված փաստաթղթերում կատարված փոփոխություններն ու լրացումները, ինչպես նաև ժամանակին ծանուցել կապի միջոցների վավերապայմաններում և արժեթղթերի հաշվով գործառնություններ կատարելու լիազորությունների փոփոխման մասին: Նշված փոփոխությունների մասին ժամանակին չտեղեկացնելու դեպքում Բանկը պատասխանատվություն չի կրում հաճախորդի կողմից հաշվետվություններ, քաղվածքներ ժամանակին չստանալու համար, ինչպես նաև դրա հետևանքով պատճառված վնասի համար:
- 4.4 Հաճախորդը Բանկի հետ կարող է կապ հաստատել հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով: Ներդրումային ծառայությունների հետ կապված փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը տրամադրվում է հայերեն և առկայության դեպքում նաև անգլերեն լեզուներով:
- 4.5 Բանկը նախքան Հաճախորդի հետ Պայմանագրի կնքումը Հաճախորդին է տրամադրում տեղեկատվություն բանկի կողմից մատուցվող ներդրումային, այդ թվում՝ բրոքերային ծառայությունների մասին, արժեթղթերի և նրանց հետ առնչվող ռիսկերի մասին, գործարքների կնքման վայրի մասին և ներդրումային ծառայությունների մատուցման հետ կապված ծախսերի ու միջնորդավճարների մասին:
- 4.6 Բանկը նախքան Հաճախորդի հետ Պայմանագրի կնքումը, Հաճախորդի կողմից ներդրումային ռիսկերը կրելու ցանկության և կարողության, արժեթղթերի վերաբերյալ գիտելիքների պարզելու նպատակով Հաճախորդից պահանջում է սույն Կանոնների Հավելված 1-ում ներկայացված տեղեկությունները:
- 4.7 Այն դեպքում, եթե Բանկը Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա գտնում է, որ տվյալ ներդրումային ծառայությունը կամ արժեթուղթը չի համապատասխանում Հաճախորդի պահանջներին, ապա Բանկը զգուշացնում է Հաճախորդին այդ մասին:
- 4.8 Այն դեպքում, երբ Հաճախորդը չի տրամադրում սույն Կանոնների 4.6 կետում նշված տեղեկատվությունը կամ տրամադրում է ոչ բավարար տեղեկատվություն, ապա Բանկը զգուշացնում է հաճախորդին այն մասին, որ հաճախորդի նման վարքագիծը թույլ չի տալիս գնահատել, թե արդյո՞ք տվյալ ներդրումային ծառայությունը կամ արժեթուղթը համապատասխանում է Հաճախորդի պահանջներին:
- 4.9 Բանկը հիմնվում է Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկությունների վրա, բացառությամբ եթե գիտի կամ կարող էր իմանալ, որ տեղեկատվությունն ակնհայտորեն հնացած է, ոչ ճշգրիտ կամ ոչ լիարժեք:
- 4.10 Բանկը Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա դասակարգում է վերջինիս որպես պրոֆեսիոնալ կամ ոչ պրոֆեսիոնալ Հաճախորդ, ընդ որում Հաճախորդը դասակարգվում է որպես պրոֆեսիոնալ՝ բացառապես իր գրավոր համաձայնությունը Բանկին ներկայացնելու դեպքում:
- 4.11 Բանկը տեղեկացնում է հաճախորդին, որ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, արժեթղթերում կատարված ներդրումները երաշխավորված չեն ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:

5. ՀԱՃԱՍԽՈՐԴՆԵՐԻ ՀԱՇՎՆԵՐԻ ԲԱՅՈՒՄԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

- 5.1 Սույն Կանոնների 4-րդ գլխում նախատեսված տեղեկությունները փոխանակելուց հետո, Հաճախորդի և Բանկի միջև կնքվում է Պայմանագիր, որից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում Բանկում Հաճախորդի անունով կարող է բացվել դեպո հաշիվ՝ Բանկի համապատասխան ներքին ընթացակարգերով սահմանված կարգով:
- 5.2 Սույն կանոնների 5.1. կետի համաձայն Հաճախորդի և Բանկի միջև Պայմանագիրը կնքելուց հետո Հաճախորդն իրավունք է ստանում սույն Կանոններով Բանկին ներկայացնել Հանձնարարականներ՝ նախապես համապատասխան դրամական միջոցները և/կամ արժեթղթերը փոխանցելով Բանկում բացված իր համապատասխան հաշիվներին և/կամ դրանց բացակայության դեպքում Բանկի,՝ Պայմանագրում ամրագրված, ՀՀ Կենտրոնական բանկում կամ Կենտրոնական դեպոզիտարիայում վարվող համապատասխան հաշիվներին:
- 5.3 Բրոքերային ծառայությունների մատուցման ընթացքում Բանկը կարող է ի շահ իրեն օգտագործել Հաճախորդի անունով Բանկում բացված բանկային հաշիվն/հաշիվներին առկա դրամական միջոցները:
- 5.4 Բանկի հետ Պայմանագիր կնքելիս իրավաբանական անձ հանդիսացող Հաճախորդը ներկայացնում է իրավաբանական անձի անունից Հանձնարարականներ ներկայացնելու իրավասություններ ունեցող անձանց ցուցակը, նրանց ստորագրությունների մուշները և անձնագրերի պատճենները:
- 5.5 Այն դեպքում, երբ Հաճախորդի բանկային և արժեթղթերով հաշիվները Բանկում չեն վարվում, Բանկի և Հաճախորդի հաշվեհամարների վերաբերյալ տեղեկատվությունը ամրագրում է պայմանագրում:
- 5.6 Հաճախորդը կարող է նշանակել լիազորված անձի/անձանց, ովքեր իրավասու կլինեն իրականացնել Հաճախորդին պատկանող արժեթղթերով գործարքներ:
- 5.7 Լիազորագրի տրամադրման ժամանակ հաճախորդը պարտավոր է ներկայացնել Բանկի կողմից սահմանված փաստաթղթերը:

6. ԲԱՆԿԻՆ ՏՐՎՈՂ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԻ ՉԵՎԸ ԵՎ ԴՐԱ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

- 6.1 Հաճախորդի կողմից կատարման ենթակա հանձնարարականների ձևը սահմանվում է սույն Կանոնների հավելված 2-ով:
- 6.2 Պայմանագրով կարող են նախատեսվել Հանձնարարականին ներկայացվող այլ պահանջներ՝ սահմանված Բանկի և Հաճախորդի փոխադարձ համաձայնությամբ:
- 6.3 Հաճախորդի արժեթղթերով և/կամ դրամական միջոցներով գործարքների կնքման համար հիմք է հանդիսանում Հաճախորդի կողմից սույն Կանոնների Հավելված 2-ին համապատասխան լրացված և թղթային, ֆաքսիմիլային կամ էլեկտրոնային եղանակով Բանկին ներկայացված Հանձնարարականը: Հանձնարարականը ներկայացված է համարվում, եթե այն ներկայացվել է Հաճախորդի կողմից անձամբ կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից, կամ ուղարկվել է Բանկի հետ փոխհամաձայնեցված և Պայմանագրում ամրագրված ֆաքսիմիլային/էլեկտրոնային կապի միջոցներով:
- 6.4 Թղթային եղանակով Հանձնարարականը ներկայացնելու դեպքում Բանկի աշխատակիցը ստուգում է Հանձնարարականը ներկայացնող անձի լիազորությունները: Էլեկտրոնային կամ ֆաքսիմիլային եղանակով Հանձնարարականի ներկայացման դեպքում Պատասխանատու աշխատակիցը ստուգում է Հանձնարարականի ներկայացման ընթացակարգի համապատասխանությունը Էլեկտրոնային կամ ֆաքսիմիլային կապի միջոցով հաղորդակցման համապատասխան պայմանագրով սահմանված ընթացակարգին:
- 6.5 Հաճախորդի կողմից թղթային ձևով Հանձնարարականը Բանկին ներկայացվում է երկու օրինակից, ընդ որում մեկ օրինակը մնում է Բանկի մոտ, իսկ մյուս օրինակը «Հանձնարարականը ընդունված է և ենթակա է կատարման որոշակի պայմանների բավարարման դեպքում» նշագրմամբ և Բանկի աշխատակցի ստորագրությամբ վերադարձվում է Հաճախորդին: Հանձնարարականի կատարումը մերժելու դեպքերը / պայմանները սահմանվում են սույն Կանոնների 6.10 կետում:
- 6.6 Հաճախորդի կողմից ֆաքսիմիլային/էլեկտրոնային եղանակով Հանձնարարական ներկայացնելու դեպքում, Պատասխանատու աշխատակիցը Հաճախորդին ուղարկում է Հանձնարարականի ընդունման կամ մերժման մասին համապատասխան ֆաքսիմիլային/էլեկտրոնային հաղորդագրություն:
- 6.7 Հաճախորդի կողմից Հանձնարարականի ներկայացման պահ է համարվում Բանկի կողմից այն ընդունելու պահը: Հանձնարարականը Բանկի կողմից ընդունված է համարվում Հաճախորդին Բանկի աշխատակցի կողմից ստորագրված օրինակը վերադարձնելու կամ հաճախորդին ընդունումը հավաստող համապատասխան հաղորդագրությունը ուղարկելուց հետո:
- 6.8 Պատասխանատու աշխատակիցը հանձնարարականը ընդունելուց հետո ձեռնարկում է դրա կատարման հետ կապված գործողություններ կամ այն կատարման է ուղարկում Բանկի մեկ այլ Պատասխանատու աշխատակցին, ընդ որում Բանկը՝
- մինչև ժամը 14:00 Բանկի կողմից ընդունված հանձնարարականների կատարումը իրականացնում է միևնույն աշխատանքային օրվա ընթացքում: Եթե հաճախորդի հանձնարարականի կատարումը ենթադրում է միջոցների (արժեթղթերի և դրամական միջոցների) փոխանցում/դեպոզիտացում ֆոնդային բորսայի տեխնիկական հաշիվներին, ապա հանձնարարականը կատարվում է հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում:
 - Ժամը 14:00-ից հետո Բանկի կողմից ընդունված հանձնարարականների կատարումն իրականացվում է հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում: Բանկը հնարավորության դեպքում հանձնարարականը կատարի միևնույն աշխատանքային օրվա ընթացքում:
- 6.9 Հաճախորդի հանձնարարականի կատարումից առաջ Բանկի աշխատակիցը ստուգում է հանձնարարականի վավերությունը: Ստուգումն առնվազն պետք է ներառի Հաճախորդի ստորագրությունների և կնիքի (առկայության դեպքում) ստուգում-համեմատություն Բանկին ներկայացված ստորագրության (կնիքի) նմուշի հետ, իսկ Բանկի ներքին ընթացակարգերով սահմանված գումարը գերազանցող հանձնարարականի դեպքում պահանջվում է Հաճախորդի կողմից լրացուցիչ հաստատում:
- 6.10 Բանկը իրավունք ունի մերժել Հաճախորդի Հանձնարարականի կատարումը հետևյալ դեպքերում.
- 6.10.1 Հաճախորդի (նրա լիազոր ներկայացուցչի) անձը հաստատող փաստաթղթի անհամապատասխանության կասկածի դեպքում.
- 6.10.2 Սույն Կանոնների Հավելված 2-ով սահմանված ձևից շեղումներով կամ ջնջումներով ներկայացված Հանձնարարականի դեպքում.
- 6.10.3 այն դեպքում, երբ Հաճախորդի դրամական միջոցները կամ արժեթղթերը, որոնց նկատմամբ տրվել է Հանձնարարականը, ծանրաբեռնված են այլ անձանց իրավունքներով կամ կալանքի տակ են գտնվում (արգելադրված են).
- 6.10.4 երբ Հաճախորդի՝ Բանկում սպասարկվող դրամային կամ դեպոզիտային կամ դրանց բացակայության դեպքում պայմանագրում ամրագրված Բանկի հաշիվներին բացակայում են Հաճախորդի կողմից փոխանցված համապատասխան դրամական միջոցները կամ արժեթղթերը.
- 6.10.5 այն դեպքում, երբ Հաճախորդի կողմից ներկայացված Հանձնարարականով գործարքի կատարումը հակասում է Հաճախորդի ներդրումային նպատակներին: Եթե Հաճախորդը այնուամենայնիվ պնդում է գործարքի կատարման համար, Բանկը պետք է Հաճախորդից

- ստանա հաստատում առ այն, որ վերջինս տեղեկացված է գործարքի արդյունքում առաջացած իր ներդրումային նպատակներին անհամապատասխանության և հնարավոր ռիսկերի մասին.
- 6.10.6 Հանձնարարականում նշված պայմանների՝ ՀՀ օրենսդրությանն ու իրավական ակտերին, ինչպես մաս սույն Կանոններին անհամապատասխանության դեպքում:
- 6.10.7 Եթե առկա են պայմանագրով սահմանված այլ պատճառներ:
- 6.11 Հաճախորդը կարող է հետ կանչել կամ չեղյալ ճանաչել ներկայացված Հանձնարարականը կամ դրանում գնային, քանակական, ժամանակային կամ այլ պայմանների փոփոխություններ կատարել, եթե սվյալ Հանձնարարականի հիման վրա գործարք դեռևս չի կնքվել Բանկի կողմից:
- 6.12 Հաճախորդի կողմից նախկինում տրված հանձնարարականի չեղարկման համար հիմք է հանդրսանում Հավելված 4-ին համապատասխան լրացված և Բանկ ներկայացված Հանձնարարականը:
- 6.13 Բանկն իրավունք ունի հրաժարվել Հաճախորդի Հանձնարարականը կատարելուց այն դեպքում, երբ Հանձնարարականի կատարումը հնարավոր չէ՝ կապված շուկայական իրավիճակի, գործարար շրջանառության սովորույթների և այլնի հետ:
- 6.14 Հանձնարարականը կատարելուց հրաժարվելու դեպքում Բանկն այդ մասին անհապաղ տեղեկացնում է Հաճախորդին՝ վերջինիս Հանձնարարականը կատարելուց հրաժարվելու վերաբերյալ համապատասխան հաղորդագրություն կամ ծանուցում ուղարկելու միջոցով:
- 6.15 Հաճախորդն իրավունք ունի Պայմանագրի գործողության ընթացքում փոփոխել սույն Կանոնների Հավելված 1-ի համաձայն ներկայացված տեղեկությունները:
- 6.16 Բանկը իրավունք ունի Պայմանագրի գործողության ընթացքում Հաճախորդից պարբերաբար պահանջել սույն Կանոնների Հավելված 1-ի համաձայն ներկայացվող տեղեկությունները:
- 6.17 Հաճախորդը կարող է արժեթուղթ ձեռք բերելու նպատակով Բանկից ստանալ փոխառություն կամ վարկ, ինչպես նաև իրականացնել կարճ վաճառք, եթե Բանկի հետ կնքել է համապատասխան լրացուցիչ համաձայնագիր:
- 6.18 Հաճախորդը կարող է Բանկին տալ ռեպո գործարքների, ինչպես նաև ածանցյալ գործիքներով գործարքներ կատարելու Հանձնարարականներ, եթե Բանկի հետ կնքել է համապատասխան լրացուցիչ համաձայնագիր:

7. ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

- 7.1 Հաճախորդի կողմից Բանկ ներկայացված և վերջինս կողմից ընդունված Հանձնարարականի հիման վրա Բանկը, մինչև Հանձնարարականով նախատեսված գործարքի կատարման պահը, Հաճախորդի համապատասխան հաշիվներում կամ դրանց բացակայության դեպքում Բանկի՝ ՀՀ կենտրոնական բանկում կամ դեպոզիտարիայում վարվող հաշիվներին հաճախորդի կողմից փոխանցված միջոցներից սառեցնում է գործարքի կատարման համար անհրաժեշտ դրամական միջոցները և/կամ արժեթղթերը:
- 7.2 Բանկի կողմից գործարքները կնքվում են.
- 7.2.1 Կարգավորվող շուկայում՝ Բանկի կողմից բորսայական առևտրի ընթացքում արժեթղթի գնման/վաճառքի առաջարկ ներկայացնելու միջոցով
- 7.2.2 Չկարգավորվող շուկայում՝ արտաբորսայում՝ Բանկի կողմից բորսայից դուրս արժեթղթի գնման/վաճառքի առաջարկ ներկայացնելու միջոցով
- 7.3 Ֆոնդային բորսայում Բանկի կողմից գործարքները կնքվում և կատարվում են Ֆոնդային բորսայի կողմից սահմանված կանոններին համապատասխան:
- 7.4 Արտաբորսայական գործարքները Բանկի կողմից կնքվում և կատարվում են արժեթղթերի շուկան կարգավորող ՀՀ օրենսդրության համաձայն:
- 7.5 Հաճախորդի Հանձնարարականը կատարելու համար Բանկը իր հայեցողությամբ իրավունք ունի ներգրավել նաև այլ կազմակերպություններ, այդ թվում՝ արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց, ինչպես նաև օգտվել միջազգային և տեղական շուկաներում այլ կազմակերպությունների կողմից տրամադրվող էլեկտրոնային առևտրային համակարգերից:
- 7.6 Թույլատրվում է Հանձնարարականում նշված պատվերի կատարումը մաս առ մաս, եթե Հանձնարարականով այլ բան նախատեսված չէ:
- 7.7 Լիմիտային պատվերները Բանկի կողմից կատարվում են կախված շուկայի ընթացիկ իրավիճակից: Բանկն իրավունք ունի կատարել պատվերն ավելի շահավետ պայմաններով, քան նշված է Հանձնարարականում: Այդ դեպքում Հաճախորդի նշած գնի և կատարման գնի տարբերության կեսը հանդիսանում է լրացուցիչ պարգևավճար Բանկի համար, որը գանձվում է Բանկի կողմից, Հաճախորդի՝ Բանկի մոտ բացված դրամային հաշվից, կամ դրանց բացակայության դեպքում Բանկի ՀՀ կենտրոնական բանկում կամ դեպոզիտարիայում վարվող հաշիվներին հաճախորդի կողմից փոխանցված միջոցներից:

8. ՀԱՃԱԽՈՐԴԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ

- 8.1 Հանձնարարականի հիման վրա արժեթղթերի գնման/վաճառքի յուրաքանչյուր գործարքը կնքելուց հետո Սպասարկողը մինչև գործարքի կնքման հաջորդ աշխատանքային օրվա ավարտը, Հաճախորդի հետ համաձայնեցված կապի միջոցներով, գործարքի կնքման վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում Հաճախորդին (ընթացիկ հաշվետվություն), որտեղ ներառում է ՀՀ իրավական ակտերով և Բանկի Կանոններով սահմանված տեղեկությունները:
- 8.2 Եթե հաճախորդի պատվերը կատարվում է մասնաբաժիններով, ապա Բանկը հաճախորդին է ներկայացնում պատվերի կատարման մասին հաշվետվությունը՝ ըստ յուրաքանչյուր մասնաբաժնի:

9. ՍԱԿԱԳՆԵՐ

- 9.1 Ծառայությունների սակագները / միջնորդավճարները սահմանվում են Բանկի կողմից և հրապարակվում են Բանկի ինտերնետային կայքում <http://www.hsbc.am>: Բանկն իրավունք ունի տարբերակված սակագներ սահմանել Հաճախորդի հետ կնքվող Պայմանագրով:
- 9.2 Բանկն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել սակագները, որի մասին տեղեկացումը Հաճախորդին կատարվում է նշված փոփոխությունները Բանկի ինտերնետային կայքում՝ տեղակայելու միջոցով, ընդ որում կայքում պարտադիր նշվում է նաև այդ փոփոխությունների տեղակայման ամսաթիվը:
- 9.3 Փոփոխված սակագները ուժի մեջ են մտնում և Հաճախորդի համար դառնում են պարտադիր Բանկի ինտերնետային կայքում տեղակայվելուց 10 (տասն) օր հետո:

10. ՀԱՐԿՈՒՄ

- 10.1 ՀՀ օրենսդրության համաձայն՝ ռեզիդենտ իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդները ինքնուրույն են իրականացնում արժեթղթերով գործարքների արդյունքում ծագած հարկային պարտավորությունների հաշվառումն ու վճարումը: Բանկն արժեթղթերի գործարքների վերաբերյալ բավարար տեղեկություն է տրամադրում Հաճախորդներին, որպեսզի վերջիններս հնարավորություն ունենան ինքնուրույն իրականացնել իրենց հարկային պարտավորությունների հաշվառումն ու վճարումը:
- 10.2 ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում Բանկն ինքն է իրականացնում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ հանդիսացող Հաճախորդների հարկային պարտավորությունների հաշվառումն ու վճարումը:

11. ՏԵՂԵԿԱՑՈՒՄՆԵՐ ՀՆԱՐԱՎՈՐ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- 11.1 Արժեթղթերի շուկայում գործառնությունների իրականացման հետ կապված ռիսկեր.
- 11.1.1 Բանկը տեղեկացնում է Հաճախորդին այն բանի մասին, որ արժեթղթերում ցանկացած ներդրում իր բնույթով հանդիսանում է ռիսկային: Արժեթղթերի շուկայում գործարքներ կատարելիս ներդրողը առնչվում է հետևյալ ռիսկերի հետ.
- 11.1.1.1 Ֆինանսական գործիքների գների փոփոխության ռիսկ. Արժեթղթերի շուկայական գները և դրանց փոփոխությունները չեն գտնվում Բանկի հսկողության տակ, ինչի պատճառով արժեթղթերում ներդրման դեպքում հնարավոր է նաև Հաճախորդի պորտֆելի արժեքի նվազում, ընդհուպ մինչև ամբողջ պորտֆելի կորուստը
- 11.1.1.2 Իրացվելիության նվազման ռիսկ. Այս ռիսկը կապված է տվյալ գործիքի նկատմամբ շուկայի այլ մասնակիցների հետաքրքրության նվազման հետ: Ֆինանսական գործիքի իրացվելիությունը կախված է թողարկողների կողմից կատարվող գործողություններից, նրանց ֆինանսատնտեսական գործունեությունից, ընդհանուր շուկայի վիճակից, բորսաների և առևտրային հրապարակների ներքին կանոններից, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ տվյալ ֆինանսական գործիքի գնի հետևաբար նաև Հաճախորդի պորտֆելի արժեքի վրա:
- 11.1.1.3 Օրենսդրության փոփոխության ռիսկ. Այս ռիսկը կապված է պետական և շուկաները կարգավորող այլ մարմինների գործողությունների հետ, որի հետևանքով Հաճախորդը կարող է կրել կորուստներ:

- 11.1.1.4 Ենթակառուցվածքային ռիսկ. Այս ռիսկը կապված է դեպոզիտարիաների, բորսաների, հաշվարկաքրիթինգային կազմակերպությունների աշխատանքների հետ, որոնց գործունեությունում ընդհատումները կարող են բերել Հաճախորդի ակտիվների (ինչպես դրամական միջոցների, այնպես էլ արժեթղթերի) անվերադառնալի կորուստների:
 - 11.1.1.5 Էլեկտրոնային առևտրային համակարգերի օգտագործման հետ կապված ռիսկեր. Այս ռիսկերը կապված են համակարգչային սարքավորումների, ծրագրային ապահովման անսարքության առաջացման, էլեկտրասնուցման, ինտերնետ փրովայդերների հետ կապված խնդիրների, կապի ընդհատումների և այլնի հետ, որոնք կարող են առաջ բերել Հաճախորդի ակտիվների կորուստներ:
 - 11.1.1.6 Այլ ռիսկեր. Վերը թվարկված ռիսկերի ցանկը սպառնիչ չէ: ներդրումային գործունեությունը կարող է ուղեկցվել նաև այլ ռիսկերով:
- 11.2 Տեղեկատվության էլեկտրոնային փոխանակման հետ կապված ռիսկեր.
- 11.2.1 Հաճախորդը տեղեկացվում է այն մասին, որ ներդրումային գործունեությունը պարունակում է ռիսկեր՝ կապված մատուցվող ծառայությունների էլեկտրոնային բնույթի հետ, ինչպիսիք են, օրհանակ, հուսալի կապի բացակայությունը, էլեկտրաէներգիայի անջատման հնարավորությունը, ծրագրային ապահովման աշխատանքի խաթարումը և այլն: Բանկը պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց գործողությունների հետևանքով էլեկտրոնային առևտրի համակարգերի աշխատանքի ընդհատման համար: Բանկը նաև պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց գործողությունների արդյունքում Բանկի և Հաճախորդի միջև փոխանցվող տեղեկատվության՝ երրորդ անձանց հասանելի դառնալու համար:
- 11.3 Ներդրումային ծառայությունից առաջացող բոլոր հնարավոր ռիսկերի վերաբերյալ տեղեկացվելուց հետո Հաճախորդը ստորագրում է Ներդրումային գործունեությունից առաջացող հնարավոր ռիսկերի վերաբերյալ ծանուցման Ձևը (հավելված 3):

12. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

- 12.1 Բանկի աշխատակիցները պարտավոր են ապահովել հաճախորդի հաշիվների վերաբերյալ ծառայողական տեղեկությունների գաղտնիությունը: Գաղտնի են համարվում հետևյալ տեղեկությունները՝
- Հաճախորդի մասին տեղեկությունները
 - Հաճախորդի արժեթղթերի հաշվի վիճակի վերաբերյալ տեղեկությունները
 - Հաճախորդի արժեթղթերի հաշվով կատարվող գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները
 - Հաճախորդի կողմից ներկայացված հանձնարարականների վերաբերյալ տեղեկությունները
 - այլ տեղեկությունները, որոնց գաղտնիության վերաբերյալ առկա է հաճախորդի գրավոր դիմումը կամ նման տեղեկատվությունը դասվել է գաղտնի տեղեկությունների շարքին Պայմանագրի կամ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:
- 12.2 Բանկում վարվող արժեթղթերի հաշիվների վերաբերյալ տեղեկությունները կարող են տրամադրվել միայն հաճախորդին, նրա լիազորված ներկայացուցչին և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ անձանց՝ հաճախորդին պատկանող արժեթղթերից բխող իրավունքների իրականացման համար: Սույն կետում նշված տեղեկությունները կարող են տրամադրվել երրորդ անձանց՝ բացառապես օրենքով նախատեսված հիմքերով և կարգով:

13. ՇԱՀԵՐԻ ԲԱՆՈՒՄ

- 13.1 Բանկի աշխատակիցները պարտավոր են պահպանել աշխատանքային բարձր կարգապահություն, թույլ չտալ շահերի բախում իրենց անձնական և/կամ հաճախորդի գործարքները կատարելիս, պատշաճ կերպով իրականացնել ներդրումային առաջարկությունների կազմումն ու տարածումը՝ շահերի հնարավոր բախումները կանխելու համար:
- 13.2 Բանկի աշխատակիցները պարտավոր են խուսափել շահերի բախում առաջացնող իրավիճակներից, մասնավորապես բանկի ղեկավար հանդիսացող աշխատակիցը պարտավոր է բացառել իր կողմից որևէ ներդրումային առաջարկի հաստատումը և բանակցային գործընթացների վարումը այն պոտենցիալ ներդրողների հետ, որոնց համար տվյալ ղեկավար անձը կարող է հանդիսանալ փոխկապակցված անձ:
- 13.3 Բանկի աշխատակիցներին արգելվում է իրականացնել սպեկուլյատիվ գործառնություններ ներդրողներից ստացված տեղեկատվության հիման վրա:
- 13.4 Ներդրողից ստացված գաղտնի համարվող տեղեկատվությունը ոչ մի դեպքում չպետք է օգտագործվի ի նպաստ բանկի կամ այլ անձի առանց հաճախորդի համաձայնության:
- 13.5 Շահերի բախումը կանխելու նպատակով բանկի աշխատակիցները պարտավոր են խստորեն պահպանել հետևյալ կանոնները.

- 13.5.1 հանդես չգալ առաջարկով գնել ներդրումային կոնկրետ գործիքներ ինչի արդյունքում բանկը կստանա եկամուտ, իսկ հաճախորդը անկարող լինելով գնահատել հնարավոր ռիսկերը կրի հնարավոր կորուստներ
- 13.5.2 հանդես չգալ առաջարկով վաճառել ներդրումային պորտֆելը հաճախորդի համար ոչ նպատակավոր պայմաններով, չարաշահելով տեղեկացված լինելու առավելությունները՝ բանկին եկամուտ բերելու ակնկալիքով
- 13.5.3 հանդես չգալ առաջարկով գնել ներդրումային կոնկրետ գործիքներ, որոնք հաճախորդի համար հարմար չեն, սակայն աշխատակցի համար սահմանված են թիրախներ դրանց վաճառքի գծով
- 13.5.4 հանդես չգալ արժեթղթեր գնելու առաջարկով մեկ այլ հաճախորդի, դրանք նեղ շուկայում վաճառելու հնարավորություն տալով, ինչի արդյունքում վերջինս կստանա եկամուտ
- 13.5.5 հանդես չգալ առաջարկով ներդրումներ կատարել արժեթղթերի նոր թողարկման մեջ, ինչը բանկին թույլ կտա կատարել իր պարտավորությունը թողարկողի կամ տեղաբաշխողի նկատմամբ, սակայն նպատակահարմար չի հաճախորդի համար:

14. ԲՈՂՈՔՆԵՐ

Բորքերային գործունեության հետ կապված բողոքների ընդունումը և քննարկումը կատարվում է Բանկի «Բողոքների ընդունման և քննարկման» ընդհանուր կարգի համապատասխան:

15. ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ՎԵՐԱՀԱԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

- 15.1 Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանումը պատասխանատու է արժեթղթերի շուկայում Բանկի մասնագիտացված գործունեության վերահսկման համար: Այն անձը կամ անձինք, որոնք ներգրավված են լինելու Բորքերային գործունեության վերահսկման գործառնությունների մեջ, պետք է ունենան արժեթղթերի շուկայում գործունեության համապատասխան մասնագիտական գիտելիքներ:
- 15.2 Արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեության ներքին վերահսկողության նպատակները ներքին վերահսկողության հիմնական ուղղությունների շրջանակներում հետևյալն են՝
 - ապահովել Բանկի կողմից մասնագիտացված գործունեության իրականացման ընթացքում Օրենքով, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով, ԷյՋ-Էս-Բի-Սի Խմբի կանոններով սահմանված պահանջների պահպանումը,
 - ապահովել Բանկի Հաճախորդների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:
- 15.3 Արժեթղթերի շուկայում Բանկի մասնագիտացված գործունեության ներքին վերահսկողության հիմնական ուղղություններն են՝
 - ներքին հաշվառմանը ներկայացվող պահանջների վերահսկողությունը,
 - ծառայողական տեղեկատվության պահպանմանը և տրամադրմանը ներկայացվող պահանջների վերահսկողությունը,
 - ֆիդուցիար պարտականությունների վերահսկողությունը,
 - շահերի բախմանը ներկայացվող պահանջների վերահսկողությունը,
 - արժեթղթերի հրապարակային առևտրի ներկայացվող պահանջների վերահսկողությունը,
 - մասնագիտացված որակավորման պահանջների վերահսկողությունը,
 - մասնագիտացված գործունեությունը կարգավորող, այդ թվում՝ ներքին կանոնների պահպանման վերահսկողությունը:

16. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ

- 16.1 Սույն Կանոններում փոփոխությունները և լրացումները կատարվում են Բանկի կողմից միակողմանիորեն:
- 16.2 Սույն Կանոններում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին տեղեկացումը Հաճախորդին կատարվում է նշված փոփոխությունները Բանկի ինտերնետային կայքում՝ <http://www.hsbc.am> տեղակայելու միջոցով, ընդ որում կայքում պարտադիր նշվում է նաև այդ փոփոխությունների տեղակայման ամսաթիվը:
- 16.3 Սույն Կանոններում Բանկի կողմից կատարված բոլոր փոփոխություններն ու լրացումները, որոնք կատարվել են Բանկի նախաձեռնությամբ և կապված չեն գործող օրենսդրության փոփոխությունների

հետ, ուժի մեջ են մտնում և Հաճախորդի համար դառնում են պարտադիր Բանկի ինտերնետային կայքում տեղակայելուց 10 (տասն) օր հետո:

16.4 Բանկի կողմից սույն Կանոններում կատարած բոլոր փոփոխությունները, որոնք կապված են գործող օրենսդրության, առևտրի կազմակերպիչների կանոնների և կանոնակարգերի փոփոխությունների հետ, ուժի մեջ են մտնում վերջիններիս ուժի մեջ մտնելու պահից:

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՓՈՐՁԸ

1. Արժեթղթերի աշխատանքային փորձի վերաբերյալ

- հարուստ
- բավարար
- կարճատև
- փորձը բացակայում է

2. Ներդրումային նպատակների վերաբերյալ

- երկարաժամկետ ներդրումներ
- սպեկուլյատիվ բնույթի կարճաժամկետ ներդրումներ
- իրացվելիության կառավարում
- այլ _____

3. Ֆինանսական գործիքներում ներդրումների վերաբերյալ

- բաժնետոմսեր և այլ բաժնային արժեթղթեր
- մուրհակներ
- ածանցիկ գործիքներ
- ինվեստիցիոն հիմնադրամի արժեթղթեր
- պետական, մունիցիպալ և կոորպորատիվ պարտատոմսեր
- արժուքային պայմանագրեր
- «ռեպո» գործարքներ
- արժեթղթերով գործառնություններ
- այլ գործարքներ _____

4. Տեղեկություններ ներդրվող գումարի չափի վերաբերյալ

Սկսած (ՀՀ դրամ)՝ _____

Մինչև (ՀՀ դրամ)՝ _____

Հանձնարող _____
(անվանում / անուն, ազգանուն)

(ստորագրություն)

Կ.Տ.

Բանկի օգտագործման համար / For Bank use only _____ Հանձնարողի ստորագրությունը վավերացված է / Signature verified _____ (բանկի լիազորված աշխատակցի անունը, ազգանունը, ստորագրությունը / Authorized staff Name, Surname, Signature)

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԳՆՄԱՆ / ՎԱՃԱՌՔԻ

Հանձնարարական N ____

Հանձնարարականի տրման ժամանակը (րոպե/ժամ/օր/ամիս/տարի)՝ _____

Հաճախորդի հետ կնքված պայամանագրի համարը և ամսաթիվը՝ _____

Հաճախորդի դեպո հաշվի համարը՝ _____

Հաճախորդի Անունը, Ազգանունը, Անձնագրի համարը/Անվանումը՝ _____

Հաճախորդի բանկային հաշվի համարը՝ _____

Պատվերի պայմանները

- Շուկայական պատվեր
- Գնման լիմիտային պատվեր
- Վաճառքի լիմիտային պատվեր
- Գնման ստոպ պատվեր
- Վաճառքի ստոպ պատվեր
- Գնման ստոպ լիմիտային պատվեր
- Վաճառքի ստոպ լիմիտային պատվեր

Քանակական պայմանները

- Բավարարել ամբողջությամբ
- Բավարարել մասնակի
- Հանել մնացորդը

Ժամանակային պայմանները

- Անմիջապես բավարարել կամ հանել
- Պահել հերթում մինչև բավարարելը

N	Թողարկողի անվանումը	Արժեթղթերի դասը	Գործարքի տիպը (բորսայական / արտաբորսայական / այլ չկարգավորվող շուկա)	Գործարքի տեսակը (առք/վաճառք)	Արժեթղթերի քանակը	Արժեթղթերի անվանական արժեքը	Արժեթղթերի գնման/վաճառքի գինը

Հաճախորդ _____
(ստորագրություն)

Հանձնարարականն ընդունեցի _____
Պատասխանատու աշխատակցի ստորագրություն

Կ.Տ.

<p>Բանկի օգտագործման համար / For Bank use only</p> <hr/> <p>Հաճախորդի ստորագրությունը վավերացված է / Signature verified</p> <hr/> <p>(բանկի լիազորված աշխատակցի անունը, ազգանունը, ստորագրությունը / Authorized staff Name, Surname, Signature)</p>

Հաճախորդի Ծանուցման Ձև Customer Notification Form

Ես՝ ներքոստորագրյալս, սույնով հաստատում եմ, որ ծանոթացել և հասկացել եմ Բանկի կողմից մատուցվող Ներդրումային Ծառայություններից օգտվելու արդյունքում առաջացող հնարավոր ռիսկերի հետ:

Hereinafter I confirm that I have read and understood the possible risks which may rise when using the Investment Services of the Bank.

Հաճախորդի Անուն, Ազգանուն/ Անվանում _____
Customer Name, Surname

Անձնագրի Համար _____
Passport Number

Ստորագրություն _____
Signature

Կ.Տ.
Seal

Բանկի օգտագործման համար / For Bank use only
Հաճախորդի ստորագրությունը վավերացված է / Signature verified

(Բանկի լիազորված աշխատակցի անունը, ազգանունը, ստորագրությունը / Authorized staff Name, Surname, Signature)

**ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԻ ՉԵՂԱՐԿՄԱՆ Ձև
INSTRUCTION CANCELTION FORM**

Խնդրում եմ չեղյալ համարել Բրոքերային Ծառայությունների մատուցման վերաբերյալ N: _____

պայմանագրի համաձայն _____ ին «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
(ամիս, ամսաթիվ, ժամ, րոպե)

ներկայացրած N` _____ հանձնարարականը , ստորև ներկայացված տվյալներով`

Please cancel the instruction N:____ presented to “HSBC Bank Armenia” cjsc on _____
(Date,Time)
according to the Brokerage Services N: _____ Agreement with the details provided below:

N	Թողարկողի անվանումը	Արժեթղթերի դասը	Գործարքի տիպը (բորսայական / արտաբորսայական / այլ չկարգավորվող շուկա)	Գործարքի տեսակը (առք/վաճառք)	Արժեթղթերի քանակը	Արժեթղթերի անվանական արժեքը	Արժեթղթերի գնման/վաճառքի գինը

Հաճախորդի Անուն, Ազգանուն/ Անվանումը` _____
Customer Name, Surname/Name:

Հաճախորդի ստորագրություն` _____
Customer Signature

Վ.Տ. Ամսաթիվ` _____
Seal Date:

<p>Բանկի օգտագործման համար / For Bank use only</p> <p>Հաճախորդի ստորագրությունը վավերացված է / Signature verified</p> <p>_____</p> <p>(բանկի լիազորված աշխատակցի անունը, ազգանունը, ստորագրությունը / Authorized staff Name, Surname, Signature)</p>
--

Հաճախորդը կարող է չլրացնել աղյուսակի տվյալները, եթե հանձնարարականը չեղարկվում է ամբողջությամբ:
Customer may not complete the information in the table above if all bids are subjected for cancellation.